Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՍՐԲ. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գահակալութեան յաջորդ օրն իսկ, դեկտ. 2ին, Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Տ. Մեսրոպ, Տ. Մկրտիչ և Տ. Սմբատ սրբազաններու, Տ. Կիւրեղ Վրդ.ի և դիւանապետ Պր. Նուրեանի այցելեց **Ն. Վ. Բարձր Կոմիսէրին**, և շնորհակալութիւն յայտնեց Արքայական Հրովարտակի յանձնումի արարողութեանց առթիւ յայտարարած համակրանքին և պատրիարքական ուխտի եկեղեցական հանդիսութեանց առեն իր կողմէ ներկայացուցիչներ ղրկել հաճած ըլլալուն համար։— Նոյն օրը շնորհակալութեան այցելութիւններ փոխադարձուեցան նաև Բ. Կոմիսէրութեան **Չիյֆ Սեկրեթերի ար. Եունկի**, և Երուսաղէմի Կառավարիչ **Մր. Կամբէլի**։

Դեկտ. 4ի ուրբաթ երեկոյին, Ս. Պատրիարքը, հինգ Ս. եպիսկոպոսներու, Տ. Մամբրէ և Տ. Կիւրեղ վարդապետներու, Պր. Միխայէլեանի եւ Երուսաղէմի հայ երեւելիներու հետ ներկայ գտնուեցաւ ամերիկեան Նիւյը Իստի Երուսաղէմի ներկայացուցիչ և ամերիկեան **Փոխ-Հիւպատոս Մր. Պլաչֆորդի** կողմէ իր տան մէջ մեծարուած թէյասեղանին, և զգածուած սրտիւ խօսեցաւ ամերիկեան մարդասիրութեան հանդէպ Հայոց ստացած շնորհապարտ սիրոյն նկատմամբ։ Այդ սեղանին ներկայ էր նաև **Մր. Դէյվիսոն**, Նիւյը Իստի Եգիպտոսի ներկայացուցիչը, որ յատկապէս եկած էր Երուսաղէմ, պատրիարքական հանդիսութեանց ներկայ գտնուելու համար։

Դեկտ. 7, բշ. առաւօտուն, աւանդական թափորով, հինգ եպիսկոպոսներու և չորս վարդապետներու ընկերակցութեամբ, Ս. Պատրիարքը այցելեց **Յունաց Պատրիարքարանը**, ուր Պատր. Տեղապահը, շրջապատուած իր սինոդականներէն, սիրալիր ընդունելութեան մեծարանք ընծայեց։ Ապա նոյն թափորով այցելեց **Ֆրանչիսկեան միաբանութեան**, եւ ի վերջոյ **Լատին Պատրիարքարանը**։ Այս երկու տեղերն ալ, թէ Ֆրանչիսկեանց պետը, Գեր. Կուստոդը, և թէ Լատինաց պատր. փոխանորդ եպիսկոպոսը, ի բացակայութեան պատրիարքին, որ Եւրոպա էր, ընդունեցան պատուազիր սիրով, շրջապատուած իրենց առաջաւոր միաբաններէն։

Դեկտ. 3 ի եշ. օրը այցելեց Պաղեստինի **Իսլամաց Կրօնապետին (Միւֆթի) Էլ Հաճ Էմին Հիւսէյնի Էֆ.ի, Քաղաքապետ Րաղըբ Պէյի**, որոնք մեծ պատուով ընդունեցին Ն. Ամենապատուութիւնը և իր հետեւորդները։ Նոյն օրը, երեկոյին, Կինգ Դէյվիդ Օթէլին մէջ Ս. Պատրիարքը ներկայ գտնուեցաւ Քաղաքապետութեան կողմէ **Ն. Վ. Բարձր Կոմիսէրին** ի պատիւ տրուած թէյասեղանին։

Նոյն օրը, կէսօրէ վերջ, այցելեց **Ղպտիներու Վանքը**, ուր, մեծաւորը, Տ. Բասիլիոս Եպիսկոպոս, ժամանումի եւ մեկնումի պահուն մեծ պատիւներ ըրաւ. մանաւանդ ուշադրաւ էր վեց քահանաներու շուրջառազգեստ ընդառաջ գալը և յետոյ նաև լուցեալ մոմ ի ձեռին յուղարկ ելնելը։

Ղպտիներէն ետքը այցելեց **Ուղղափառ Ասորւոց**։ Ի բացակայութեան եպիսկոպոսին յԵգիպտոս, փոխանորդ Տ. Միքայէլ Վարդապետ, իր միաբաններուն հետ ընդունեցաւ մեծարանքով։

Դեկտ. 9ի դշ. առաւօտուն, Տ. Մեսրոպ Սրբազանի և դիւանապետ Պր. Կ. Նուրեանի ընկերակցութեամբ այցելեց **Ֆրանսական, գերմանական, իտալական, ամերիկեան, յունական, եգիպտական և հապէշական հիւպատոսարանները**։

Դեկտ. 10ի եշ. առաւօտուն, Տ. Սմբատ Սրբազանի և Պր. Նուրեանի ընկերակցութեամբ այցելեց **Հրէից Րաբունապետին, Մեկսիկայի, Բոլոնիոյ, Շուէդի, Թուրքիոյ, Հունգարիոյ, Սպանիոյ, Լիթուանիոյ Հիւպատոսներուն**, որոնք ամէնքն ալ, ինչպէս նախորդները, անձամբ ներկայ գտնուած կամ փոխանորդ ղրկած էին պատրիարքական հանդիսութեանց։

Նոյն օրը, կէսօրէ վերջ, Տ. Մեսրոպ Եպս.ի և Տ. Կիւրեղ Վրդ.ի հետ այցելեց **Ռուսաց Վանքը**, ուր Անաստաս Արքեպիսկոպոս սրբակրօն հոգեորականը, իր միաբանութեան հետ յարգալից ընդունելութիւն մ'ըրաւ։ Յետոյ, **Դոմինիկեանց Վանքը**, ուր բազմահմուտ Հ. Լակրանժ, Հ. Աբէլ, Հ. Վէնսան և միւսները, իրենց մեծաւորին հետ, ջերմագին պատուասիրութեամբ ընդունեցին Ն. Ամենապատուութիւնը, սրտառուչ անդրադարձութեամբ ոգեկոչելով յիշատակը հոգելոյս Դուրեան Սրբազանի, որուն համար խորունկ սէր և յարգանք ունեցած են միշտ։

Դեկտ. 11ի ուրբաթ կէսօրէ վերջ այցելեց, Տ. Սմբատ Սրբազանի եւ Պր. Նուրեանի հետ, **Ռումանիոյ, Պերուի, Հոլանդայի և Դանիմարկայի Հիւպատոսներուն**, և **Պապական Նուիրակին**, որ բացակայ էր յԵգիպտոս. ի վերջոյ, Ս. Յակոբեանց ազնիւ դրացի **գերման Կաթոլիկներու Դորմիսիոն Վանքը**։

Դեկտ. 13ի կիրակիին, կէսօրէ վերջ, ընկերակցութեամբ Տ. Մեսրոպ Սրբազանի և Տ. Կիւրեղ և Պարգև վարդապետներու, իր առաջին **ուխտի այցը** ըրաւ **ի Բեթղեհէմ**, Տեառն մերոյ Ս. Ծննդեան Այրի և Մսուրի խորաններուն։ Յետոյ Տեսչարանի սրահին մէջ ընդունեցաւ այցելութիւնը **Բեթղեհէմի Կառավարիչին** և **Ոստիկանատան Տնօրէնին**, որոնք եկած էին բարի գալուստ մաղթելու։

Դեկտ. 14ի բշ. երեկոյեան այցելեց **Հապէշներուն Վանքը**, ուր մեծաւորն ու միաբանները խորին յարգանքներով ընդունեցին զինքը. իսկ յետոյ **Անգլիկան Եպիսկոպոսարանը**, ուր, Գեր. Տ. Մաք Իննէս Եպիսկոպոսի յԱնգլիա բացակայութեան պատճառաւ, ջերմ սիրով և պատուով ընդունուեցաւ Եպիսկոպոսի փոխանորդին, Կանոնիկոսին և Աւագերէցին կողմէ։

digitised by A.R.A.R.@

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտ. 11-30, Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելութեան եկան յաջորդաբար և Պատրիարքարանի գահլիճին մէջ սիրալիր ընդունելութեամբ մեծարուեցան, **Բոլոնիական Պ. Հիւպատոսը, Երուսաղէմի Կառավարիչ Վսեմ. Մր. Քամբէլ, Իտալական Պ. Ընդհ. Հիւպատոսը, Սիոնի Գերման Տաճարին վանքին մեծաւորը** իր հետևորդներով, **Երուսաղէմի Հրէական Ազգ. Ժողովին** կողմէ երկու անդամներ, **Պաղեստինի Վսեմ. Չիյֆ Ճըստիսը**, քաղաքիս Իտալական Հիւանդանոցի **Բժշկապետ Տքթ. Մաքինին, Ֆրանչիսկեանց Կիւստոսը**, իր **Ատենակալից ժողովով, Ֆրանսական Պ. Ընդհ. Հիւպատոսը, Հելլենական Պ. Ընդհ. Հիւպատոսը, Պելճիքական Պատուակալ Հիւպատոս Մ. Սալանեօլօ, Յոյն Կաթոլիկաց Պատր. Փոխանորդը, Գերմանական Պ. Ընդհ. Հիւպատոսը, Ռումանական Պ. Հիւպատոսը, Հայ Կաթոլիկներու Պատր. Փոխանորդը** իր հետևորդներով, **Ռուսաց Միսիոնութեան Մեծաւոր՝ Տ. Անաստաս Արքեպս.,** քաղաքիս Church of Nazareneի ներկայացուցիչները՝ Rev. Kaufmann և Պատ. **Տր. Գերիգորեան, Աւստրիական Պ. Հիւպատոսը** և **Չեխոսլովաքիոյ Պ. Հիւպատոսը**։

Նորին Ամենապատուութիւնը, հետն ունենալով Գեր. Տ. Տ. Մեսրոպ, Մկրտիչ և Սմբատ Սրբազանները, Հոգ. Տ. Կիւրեղ և Տ. Գարեգին Վարդապետները, դեկտ. 17-ին այցելեց **Ս. Թարգմանչաց Ազգ. Վարժարանն ու Մանկապարտէզը**, ինչպէս նաև **Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանը**, և խրատական խօսքերով պատասխանեց արտասանուած ուղերձներուն։

Իսկ դեկտ. 25-30 Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը այցելեց **Ժառանգաւորաց Վարժարան**, և ներկայ գտնուեցաւ դասաւանդութեանց։

Դեկտ. 23ին Ս. Յակոբայ Տաճարը այցելեց Central Housing Commissionի Նախագահ MR. FRENCH, իր Տիկնոջ և զաւակներուն և քաղաքիս Կառավարիչ **Մր. Քամբէլի** հետ։ Լուսարարապետ Սրբազանի կողմէ եկեղեցական հնութիւններ ցոյց տրուեցան իրենց, և ապա պատուասիրուեցան Պատրիարքարանիս գահլիճին մէջ։

Դեկտ. 26ին շբ. օրը, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով Միաբանութեանս հոգևորական անդամները՝ Լատինական Ս. Ծննդեան Տօնին առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ **Ֆրանչիսկեան Կիւստոդին**, և **Լատին Պատրիարքարանը**։ Այս առթիւ Պատր. Փոխանորդ Գեր. Տ. Մկրտիչ Սրբազան, իր հետևորդներով ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութիւններ տուաւ **Յոյն Կաթոլիկաց Պատր. Փոխանորդութեան** և **Սիոնի Գերմանական Տաճարին Վանքի** Մեծաւորին։

ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Դեկտ. 9ին դշ. օր, **Երուսաղէմի Գրաւման 15 րդ Տարեդարձին** առթիւ՝ առաւօտեան ժամը 8ին գոհաբանական մաղթանք տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, մասնակցութեամբ Միաբանութեանս եւ ի ներկայութեան բարեպաշտ ժողովրդեան։

ՄԵԿՆՈՒՄ Տ. ՍՄԲԱՏ ՍՐԲԱԶԱՆԻ

Դեկտ. 30ին դշ. օր Ս. Աթոռոյ Կ. Պոլսոյ Պատր. Փոխանորդ **Գեր. Տ. Սմբատ Ս. Եպս. Դաղաղեան**, մեկնեցաւ Ս. Աթոռէս դէպի Կ. Պոլիս, Սուրիոյ ցամաքային ուղեգծով։

ՎԱԽՃԱՆՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՆԳԼԻԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱԿ ԻՆՆԷՍԻ

Դեկտ. 25ի միջօրէին երբ զուժուեցաւ Նորին Սրբազնութեան վախճանումը Անգլիոյ մէջ, անմիջապէս Ամեն. Սրբ. Պատրիարք Հօր կողմէ Հոգ. Տ. Կիւրեղ վարդապետ և Ս. Թարգման Հոգ. Տ. Գարեգին Վարդապետ տեղւոյս Անգլիկան Եպիսկոպոսարանը գացին, և Նորին Ամենապատուութեան ցաւակցութիւնները ներկայացուցին Մակ Իննէս Սրբազանի անակնկալ վախճանման առթիւ.

Նոյն օրը Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ ցաւակցական հեռագիրներ ուղղուեցան Լոնդոն՝ Կանթըրպըրիի Ս. Արքեպիսկոպոսին, և Տիկին Մակ Իննէսին։

28 Դեկտեմբեր 1931 երկուշաբթի, կէսօրէն վերջ ժամը 4ին տեղւոյս Անգլիկան Սենտ Ճորճ Եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, որուն ներկայ գտնուեցաւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ և Տ. Գարեգին Վարդապետները։

Մակ Իննէս Եպիսկոպոս Երուսաղէմի մէջ Անգլիկան եպիսկոպոսներու հինգերորդն էր։ Իր քաղցր բնաւորութեամբ եւ բարի նկարագրով սէրն ու յարգանքը շահած էր բոլոր անոնց, որոնք զինքը ճանչնալու առիթը կ'ունենային։ 1914 թուականէն ի վեր արդիւնաւորապէս կատարած իր պաշտօնավարութիւնը յանկարծ վերջ կը գտնէ այսպէս վաղահասօրէն։ Հանգուցեալը 61 տարեկան էր տակաւին։ Տարիէ մը, ուր նա պիտի կրնար իր բազմամեայ փորձառութեան հասունութեամբը օգտակար ծառայութիւններ մատուցանել շատ մը գիծերու վրայ, եթէ տարաժամ ընդհատուած չըլլար իր կեանքին թելը։

Մակ Իննէս Եպիսկոպոս Հայոց Պատրիարքարանին հետ ալ միշտ լաւագոյն և սիրալիր յարաբերութիւններ մշակած և շնորհակալ թողած է։ Հանգուցեալ Դուրեան Սրբազանի մեծապէս համակրողն էր։ Իսկ Սրբազան Պատրիարքին ծանօթ բարեկամ եղած է Եգիպտոսի պաշտօնավարութեան՝ ընթացքին, երբ Գեր. Մակ Իննէս Եպս. ալ պաշտօնով Եգիպտոս կը գտնուէր։

Սիոն իր սրտագին մաղթանքները կ'ուղղէ առ Բարձրեալն ի հանգիստ հոգւոյ հանգուցելոյն, և կը հայցէ երկնային մխիթարութիւն իր սգակիր տիկնոջ և զաւակներուն։

Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ

digitised by A.R.A.R.@